Հավելված N 7
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 14-ի N 2198 - Ա որոշման

«ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԳՈՐԾԱՐՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նվիրաբերող	Արարատի մարզի Արարատ համայնք՝ ի դեմս համայնքի ղեկավարի
Սեփականության իրավունք ձեռք բերողը	«ՋԻ ԹԻ ԲԻ ՍԹԻԼ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (այսուհետ՝ ընկերություն)
Առարկան	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ գյուղում պողպատի գործարանի կառուցման գործարար ծրագրի իրականացման նպատակով համայնքի սեփականություն հանդիսացող հողատարածքի (այսուհետ՝ գույք) նվիրաբերությունը ընկերությանը
Նվիրաբերման պայմանագրի կնքման ժամկետը	Հողամասը նվիրաբերող մարմնի կողմից որոշումը կայացնելուց հետո 5-օրյա ժամկետում
Հողի սեփականության իրավունքների փոխանցում	Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման պահից
Նվիրաբերման պայմանագրի կնքման ժամկետը և ծախսերը կատարվում են	Ընկերությունն իր սեփական միջոցների հաշվին կհոգա նվիրաբերության պայմանագրի կնքման հետ կապված ծախսերը (հատակագծի, հասցեի տրամադրում, չափագրում, պայմանագրի նոտարական վավերացում և այլն)
Կողմերի պարտավորությունները	1. Կողմերի միջև կնքվում է ներդրումային ծրագրի իրականացման փուլերի ժամանակացույց, որտեղ ներկայացվում է իրականացվող ներդրումային ծրագրի վերաբերյալ ֆինանսական և ոչ ֆինանսական (շենքերի, շինությունների, հյուրանոցների և այլնի վերաբերյալ տեղեկատվություն) գնահատական: 2. Յուրաքանչյուր փուլով նախատեսված ներդրումների ծավալը չկատարելու դեպքում սահմանվում է տուգանք՝ տվյալ փուլով նախատեսված փաստացի չկատարված ներդրումային ծավալի 5% չափով: 3. Տուգանքը տասն աշխատանքային օրվա ընթացքում վճարելու դեպքում ընկերությունը կարող է շարունակել իրականացնել ծրագիրը: 4. Եթե յուրաքանչյուր փուլով նախատեսված ներդրումների ծավալը ևս մեկ անգամ չի կատարվում, ապա սահմանվում է

	տուգանք՝ տվյալ փուլով նախատեսված փաստացի չկատարված ներդրումային ծավալի 10% չափով, իսկ դրանից հետո յուրաքանչյուր փուլով նախատեսված ներդրումների ծավալը կրկին չկատարելու դեպքում դա հիմք է պայմանագրի միակողմանի լուծման համար: 5. Ոչ ֆինանսական գնահատականի ապահովման դեպքում ներկայացված ֆինանսական գնահատականի շեղումը ծրագրով նախատեսված ցուցանիշներից կարող է կազմել առավելագույնը 20 %: 6. Ընկերությունը պարտավոր է՝ 1) կառուցել մետաղի վերամշակման, ձուլման և տարբեր արտադրատեսակների գործարան. 2) սկզբնական փուլում ներդնել մոտ 29.9 միլիոն ԱՄՆ-ի դոլար. 3) բացառել իր կողմից նվիրաբերման կարգով ձեռք բերված գույքի օտարումը, վարձակալության կամ օգտագործման տրամադրումը. 4) նվիրաբերած գույքն օգտագործել բացառապես ներդրումային ծրագրի իրականացման նպատակներով: 7. Ծրագրը չիրականացնել է համարվում 6-րդ կետով նախատեսված ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշներից բացասական շեղումը, ընդ որում՝ ոչ ֆինանսական ցուցանիշներն ապահովելու դեպքում ֆինանսական ցուցանիշների համար հիմք ընդունելով վերջնական հաշվետվությամբ նվիրաբերողի կողմից հաստատված արժեքը, կարող է շեղվել բացասական ուղղությամբ առավելագույնը 20%: 8. Ընկերությունը պարտավորվում է ծրագիրը իրականացնել նվիրաբերողից սույն որոշմամբ նախատեսված գույքի ձեռքբերման իրականացման պահից սկսած 5 տարվա ընթացքում: 9. Գնորդը պարտավոր է ծրագրի իրականացման ընթացքում՝ ծրագրի մեկնարկին հաջորդող երրորդ տարվա ավարտից հետո եռամսյա ժամկետում նվիրաբերողին ներկայացնել նախորդ տարիների ընթացքում ծրագրի իրականացման վերաբերյալ ընթացիկ հաշվետվություն, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում՝ լրացուցիչ այլ տեղեկատվություն, իսկ ծրագրի ժամկետի ավարտից (հինգ տարի) հետո վեց ամսվա ընթացքում՝ վերջնական հաշվետվություն: Հաշվետվությունները պետք է կազմված և հաստատված լինեն միջազգային Big 4 ցանկում ներառված անկախ աուդիտորական կազմակերպության կողմից: Հաշվետվությունները պետք է հավաստեն ընկերության կողմից ծրագրի իրականացման

	նպատակով արված ծախսերը և կատարված աշխատանք-ների ծավալները: Ընթացիկ հաշվետվությունը ժամկետում չներկայացնելու դեպքում 60-օրյա ժամկետում պետական բյուջե վճարում է տուգանք 5 մլն դրամ, իսկ վերջնական հաշվետվություն չներկայացնելը դիտարկվում է որպես ծրագիրը չկատարել: 10. Գույքի սեփականության իրավունք ձեռք բերողի կողմից չի կարող վաճառվել մինչև ծրագրի ավարտը:
Կողմերի պատասխանատվությունը	Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պատասխանատվություն են կրում պայմանագրի պայմանների խախտման համար:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

15.12.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ